6 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2001 ՀԻՆԳՇԱԲԹԻ 224 (2428)

Ազգ
Azg
armenian daily

# Մեծ եղեռնի զոհերի ապահովագրական դատը շարունակվում է հաջողությամբ

Կալիֆոռնիայում լույս տեսնող ամերիկյան թերթերը, գլխավորությամբ «Լոս Անջելես թայմսի», երեկ հաղորդեցին դաշնային դատարանում New York Life Insurance Co. ապահովագրական ընկերության նկատմամբ հայերի տարած հաղթանակի մասին: Ինչպես հայտնի է «Ազգ»-ի ընթերցողներին, Լոս Անջելեսից Վարդգես Եղիայանի իրավաբանական գրասենյակը դատական հայց էր ներկայացրել ամերիկյան դատարանին 1915 թ.-ի ցեղասպանության զոհերից ոմանց նյութական իրավունքները նրանց ժառանգներին փոխհատուցելու պահանջով: 1895-ից մինչեւ 1915 թ.-ը այդ հայերը Թուրքիայում կյանքի ապահովագրության մուծումներ էին արել ամերիկյան ու եվրոպական մի շարք ընկերությունների, այդ թվում վերոհիշյալ ապահովագրական ընկերության մոտ, ինչը մոռացության էր տրվել վերջինիս կողմից: Գործի հարուցումից հետո ընկերության փաստաբանները պահանջել էին դատը տեղափոխել Փարիզ կամ Լոնդոն՝ նկատի ունենալով, որ ապահովագրությունները կատարվել էին ֆրանսիական ֆրանկով կամ անգլիական ֆունտ ստեռլինգով: Ֆեդերալ դատավոր Քրիստինա Ա. Շնայդերը նախորդ օրը մերժել է այդ պահանջը եւ որոշել, որ դատը շարունակվելու է Մ. Նահանգներում, որտեղ զոհերի ժառանգորդներից շատերն են ապրում: Վարդգես Եղիայանը պահանջում է առնվազն 687 մլն դոլարի հատուցում կատարել զոհերի ժառանգորդներին:

ՎԱՐՉԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔՆԵՐ

# «Մամուլի իրացումը պետք է բերվի շուկա»

*Գալուստյանի պաշտոնից ազատվելը բացատրվեց հետագա բարեփոխումներում կաշկանդվածությունը թուլացնելով*

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

***Էներգետիկ ոլորտում կատարված կադրային փոփոխությունները, բաշխիչ էլեկտրացանցերի սեփականաշնորհման ձախողման եւ «Հայմամուլում» նախատեսվող կարգավիճակային փոփոխության խնդիրները որոշակի պարզաբանումների կարիք էին զգում, որոնց երեկ փորձեց անդրադառնալ հանրապետության վարչապետ Անդրանիկ Մարգարյանը խորհրդարանում: Թե որքանով պարզություն մտցվեց այդ խնդիրներում, կարելի է դատել լրագրողների հարցերին նրա պատասխանների մակերեսայնությունից:***



**– Պրն վարչապետ, կադրային փոփոխությունները շարունակություն ունենալո՞ւ են:**

– Կադրային փոփոխություններ, միշտ էլ ասել եմ, հնարավոր է լինեն, բայց ե՞րբ եւ ովքե՞ր, կիմանաք միայն փոփոխություններից հետո:

**– Մոտ ժամանակներս, ասենք, առաջիկա մեկ ամսվա ընթացքում նոր փոփոխություններ սպասվո՞ւմ են:**

– Մոտ ժամանակներս ասվածը շատ հարաբերական է, իսկ մեկ ամսվա կտրվածքով՝ դեռեւս պարզ չէ:

**– Բաշխիչ էլցանցերի սեփականաշնորհման տապալումից հետո դրանց հանդեպ նոր քաղաքականությո՞ւն է տարվելու եւ ի՞նչ եք պատրաստվում անել դրանց հետ:**

Տես ➧ էջ 2

ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԹԲԻԼԻՍԻՑ

# Վրաստանում ներքաղաքական իրավիճակը կայունանում է

*Շեւարդնաձեն հաղթեց Ժվանիային*

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ, Թբիլիսի

Վրաստանում ներքաղաքական իրավիճակը կայունանում է, երեքշաբթի օրը՝ ուշ երեկոյան երկրի խորհրդարանն առանց դժվարությունների հաստատեց եւս ութ նախարարների թեկնածությունը, ովքեր նախագահ Շեւարդնաձեի հավատարիմ կողմնակիցներն են: Ինչպես հայտնի է, նոյեմբերի 1-ին Շեւարդնաձեն արձակել էր կառավարությունն ամբողջ կազմով, երբ ուժային նախարարները եւ խորհրդարանի նախագահ Զուրաբ Ժվանիան հրաժարական տվեցին:

Երկրի նոր կառավարությունը ինչից գրեթե չի տարբերվում, բացառություն են կազմում պետանվտանգության, ներքին գործերի, էկոնոմիկայի եւ արդյունաբերության նախարարները, ինչպես նաեւ գլխավոր դատախազը: Խորհրդարանն առանց դժվարության հաստատում է նախագահ Շեւարդնաձեի ներկայացրած թեկնածությունները: Շուրջ երկու շաբաթ առաջ պաշտպանության նախարարի պաշտոնում հաստատվել էր Դավիթ Թեւզաձեն, պետանվտանգության՝ Վալերիան Խաբուրզանիան, ներքին գործերի՝ Կոբա Նարչեմաշվիլին, արդարադատության՝ Ռոլանդ Գիլիգաշվիլին, կրթության՝ Ալեքսանդր Կարտոզիան, արտաքին գործերի՝ Իրակլի Մենաղարիշվիլին, գլխավոր դատախազի՝ Նուգզար Գաբրիչիձեն: Խորհրդարանի հավանությանն արժանացած այս ութ նախարարներից յոթը նախորդ կառավարության կազմից են, բացառություն է կազմում էկոնոմիկայի եւ արդյունաբերության նախարար Գեորգի Գաչեչիլաձեն: Ֆինանսների նախարարի պաշտոնում վերահաստատվեց Զուրաբ Նողաիդելին, պետեկամուտների՝ Լեւան Չնելաձեն, գյուղատնտեսության եւ սննդի՝ Դավիթ Կիրվալիձեն, տրանսպորտի եւ կապի՝ Մերաբ Ադեիշվիլին, էներգետիկայի եւ վառելիքի՝ Դավիթ Միրցխուլավան, քաղաքաշինության՝ Մերաբ Չխենկելին, առողջապահության եւ աշխատանքի՝ Ավթանդիլ Ջորբենաձեն:

Տես ➧ էջ 5

# Դաշնային խորհուրդը վավերացրեց հայ-ռուսական համաձայնագիրը

ՄՈՍԿՎԱ, 5 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Դաշնության խորհուրդն այսօր վավերացրել է ի շահ համատեղ անվտանգության ապահովման զորքերի կիրառման համատեղ պլանավորման հարցերի վերաբերյալ Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ կնքված համաձայնագիրը: Այդ փաստաթուղթն անցյալ տարվա սեպտեմբերին ստորագրել էին երկու երկրների պաշտպանության նախարարները եւ արդեն վավերացված է Հայաստանի խորհրդարանի կողմից: Համաձայնագիրը կնքված է հինգ տարով եւ հետագայում կարող է ինքնաբերաբար երկարաձգվել:

Դաշնության խորհրդի ԱՊՀ-ի գործերի կոմիտեի նախագահ Վադիմ Գուստովն ընդգծել է, որ համաձայնագիրը նախատեսում է զորքերի կառավարման միացյալ համակարգի ստեղծում, ինչպես նաեւ զորքերի մարտական, թիկունքային, նյութատեխնիկական եւ հատուկ ապահովման կարգը: Ըստ նրա, փաստաթուղթը կնպաստի կովկասյան տարածաշրջանում իրավիճակի կայունացմանը:

# Ամբաստանյալներ Հունանյան եղբայրները քննարկում են զինդատախազության քննիչների գործունեությունը

*Ամբաստանյալ Դերենիկ Բեջանյանը հրաժարվեց պաշտպանից*

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

Նաիրի Հունանյանը «Հոկտեմբերի 27»-ի գործով դատավարության երեկվա նիստի ընթացքում ավարտեց եղբոր՝ ամբաստանյալ Կարեն Հունանյանի հարցաքննությունը: Սակայն մինչ նրա հարցերի ավարտն արձանագրելը՝ դատավարության մասնակիցների շրջանում որոշակի անցուդարձեր եղան: Մասնավորապես, ամբաստանյալ Ն. Հունանյանը քննադատության արժանացավ մեղադրողների եւ տուժողների փաստաբանների կողմից՝ այն պատճառաբանությամբ, թե նրա հարցերը չեն առնչվում քրեական գործի նյութերին: Դատավարության ընթացքը որոշակիորեն դանդաղեց՝ հիմնականում Ն. Հունանյանի «շնորհիվ»: Այնուհետ տպավորություն էր, թե դատավարությունն արհեստականորեն ձգձգելու փորձեր են արվում: Ամբաստանյալի հարցադրումների առնչությամբ տեսակետ հայտնեց փաստաբան Աշոտ Սարգսյանը, որն առաջարկեց հարցաքննությունը չվերածել զինդատախազության քննիչների ծառայողական գործողությունների վերլուծության, քանզի այդ ամենն, իբր, առնչություն չունի «Հոկտեմբերի 27»-ի գործի հետ: Մեղադրող Հակոբ Մարտիրոսյանն էլ հավելեց, որ նրա հարցադրումներում արծարծվող նյութը դատարանում ներկայացված չէ, այնպես որ, վաղաժամ է դրանց անդրադառնալը: Ինչեւէ, ամբաստանյալն ի վերջո ավարտեց իր երկարածիգ հարցաքննությունը, որի ընթացքում հնչած հարցերի գերակշիռ մասը իրոք առնչվում էր նախաքննական փուլում ամբաստանյալ Կ. Հունանյանի հանդեպ զինդատախազության քննիչների գործադրած ճնշումներին:

Տես ➧ էջ 2

# Գուլիեւը հաստատակամ է

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 5 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ադրբեջանը երբեք չի հաշտվի իր տարածքի ոչ մի քառակուսի մետրի կորստյան հետ եւ կվերականգնի իր տարածքային ամբողջականությունը: Հայաստանին հասցեագրված այսպիսի նախազգուշացմամբ Ադրբեջանի արտգործնախարար Վիլայաթ Գուլիեւը հանդես է եկել ԵԱՀԿ-ի նախարարների խորհրդի երեքշաբթի օրը Բուխարեստում կայացած նիստում, հաղորդել է ԵԱՀԿ-ի մամուլի ծառայությունը:

Ըստ Գուլիեւի, Հարավային Կովկասում խաղաղության ու կայունության վերականգնման միակ ճանապարհը «Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղին ամենաբարձր աստիճանի ինքնակառավարում տրամադրելն է»: Հակամարտության լուծման ցանկացած այլ եղանակ չի ընդունվի Ադրբեջանի կողմից, ասել է Վիլայաթ Գուլիեւը:

ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

# Նոր ահաբեկչություն Երուսաղեմում

Երեկ՝ առավոտյան 7:30, Երուսաղեմի «Հիլթոն» հյուրանոցի մուտքի մոտ տեղի է ունեցել պայթյուն, որից մարմնական թեթեւ վնասվածքներ են ստացել 8 հոգի: Պայթյունը իրականացրել է մահապարտ-ահաբեկիչը, որն, ըստ պաղեստինյան աղբյուրների, Պաղեստինի Բեթղեհեմ քաղաքից է: Ըստ նախնական ենթադրությունների, ահաբեկիչը նպատակ է ունեցել ահաբեկչություն կատարել քաղաքի կենտրոնում, սակայն պայթուցիկի անսարքության պատճառով պայթյունն ավելի վաղ է տեղի ունեցել, որն էլ կանխել է հնարավոր մեծ աղետը:

Երուսաղեմում անցյալ շաբաթ տեղի ունեցած ահաբեկչությունից հետո քաղաքում ոստիկանների թիվը կրկնապատկվել է, սակայն ահաբեկչին չի հաջողվել մոտենալ ոստիկանների խմբին: «Հիլթոն» հյուրանոցում պայթյունի պահին եղել են Իսրայելի կրոնի եւ ներքին անվտանգության նախարարները, ինչպես նաեւ Երուսաղեմի քաղաքապետը: Հյուրանոցից քիչ հեռու գտնվում է Մ. Նահանգների դեսպան Էնտոնի Զինիի բնակարանը: Երուսաղեմի ոստիկանությունը չի բացառում նաեւ



մահափորձի հավանականությունը:

Իսրայելի վերջին ռմբակոծումները պաղեստինցիների շրջանում մեծ զայրույթ են առաջացրել: Ռմբակոծումների պատճառով Պաղեստինի ինքնավարության ձերբակալված ակտիվիստները տեղափոխվել են մասնավոր բնակարաններ եւ գտնվում են անվտանգության մարմինների հսկողության ներքո: Պաղեստինի վարչակազմի անդամների կարծիքով, Իսրայելի կառավարության ձգտումը՝ անդամալուծել եւ չեզոքացնել Յասեր Արաֆաթին, կծնի նոր ահաբեկչություններ: Նրանք զգուշացրել են, որ ռմբակոծումների շարունակվելու դեպքում պաղեստինցիներն էլ հարկադրված կլինեն դիմելու ինքնապաշտպանության: Իսկ այժմ պաղեստինցիները ՄԱԿ-ի անվտանգության խորհրդից պահանջում են գումարել խորհրդաժողով՝ քննարկելու Իսրայելի ռմբակոծումների հարցը: Այս պահանջը Յասեր Արաֆաթը ներկայացրել է միջազգային հանրությանը:

Կիրակի օրն Արաբական լիգան կգումարի համաժողով, որին կմասնակցեն նաեւ ոչ անդամ 9 երկրների ներկայացուցիչներ, որոնք կխորհրդակցեն տարածաշրջանում ստեղծված պատերազմական իրավիճակի շուրջ: Ռ. Պ.

